Այսօր Արևմտյան Ադրբեջան վերադարձի գաղափարն Ադրբեջանում համազգային գաղափար է, մեր հայրենակիցների միջազգային իրավունքներին համահունչ պահանջ և ոչ միայն Ադրբեջանի, այլև հայ ժողովրդի շահերին համապատասխանող հարց: Արևմտյան Ադրբեջանի փախստականների վերադարձն իրենց հայրենի բնակավայրեր՝ ներկայիս Հայաստանի տարածքում, երկու երկրների և ժողովուրդների միջև վստահության ու կայունության կարևոր պայման և երաշխիք է: («Արևմտյան Ադրբեջան» զավթողական անվանումը կրող համայնքի ղեկավար, ով նաև Ադրբեջանի ԱԺ պատգամավոր է): *03.09.2025*

Ուրբաթ
3 հոկտեմբերի 2025թ.
№ 16 (646)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝Ց: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

«Սյունյաց երկիրը» համացանցային հարթակներում ս.թ. սեպտեմբերին իրականացրել է հանրային կարծիքի ուսումնասիրում հետևյալ հարցադրմամբ՝ **«Համաձա՞յն եք, որ Սյունիքի հարավով թուրք–ադրբեջանցուն տրվի միջանցք, որտեղ (Ալիևի պահանջով) հայ մարդը մտնելու իրավունք չպիտի ունենա»:**
Հարցմանը մասնակցածների 95.91 տոկոսը միանշանակ անհամաձայնություն է հայտնել Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև՝ միջանցքի տրամաբանությամբ (ինչ–ինչ անվամբ փաթեթավորված), Սյունիքի տարածքով երթուղու բացմանը, մանավանդ որ Ադրբեջանի նշված երկու հատվածի միջև 1991-ից՝ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով, գործում է Արազի միջանցքը:
22.09.2025

Սյունեցին դեմ է իր երկրամասի հարավով թուրք-ադրբեջանցուն միջանցք տրամադրելուն

Ցավդ տանեմ, Արցախ...

Հողս արյունոտվել է
Պատերազմում զարկված տղաների
Սառն համբույրից:
Հողս արցունքոտվել է
Որդեկորույս մայրերի
Սրտակեղեք լացից:
Հողս ծխում է
Հրդեհված արտերի
Մոխրացող ստվերներից:
Հողս ոռնում է
Վիրավոր մասրենու
Ճչացող ցավից:
Հողս մխում է
Ցեղասպան թշնամու
Լիրբ հռհռոցից:
Արցախ իմ,Սեր իմ,
Ինչպե՞ս ամոքեմ, ասա, վերքերդ:
Լացս խեղդեմ
Ու քո ցավը տանեմ, Արցախ...
Դավիթ Միքայելյան

Քաղաքացիների մեծ մասը բացասական է գնահատում Սյունիքով ճանապարհի տրամադրումը

«Գելափի» հայաստանյան գրասենյակի տնօրեն Արման Նավասարդյանը ներկայացրել է վերջին հարցման արդյունքները:

Հարցին՝ **«Ինչպե՞ս եք գնահատում Սյունիքով ճանապարհի տրամադրելը»**, քաղաքացիների 4%-ը պատասխանել է՝ «լիովին դրական», 18.1%-ը՝ «ավելի շուտ դրական», 11.3%-ը՝ «ավելի շուտ բացասական», իսկ 47.6%-ը՝ «ընդհանրապես բացասական», 5.6%-ը դժվարացել է պատասխանել:

«Տեսնում ենք, որ շուրջ 60%-ը բացասական է արձագանքել Սյունիքի տարածքով ճանապարհի տրամադրելու հանգամանքին»,– նշեց Նավասարդյանը:

Հարցին՝ «Վաշինգտոնյան համաձայնագիրը կնպաստի՞ արդյոք երկարաժամկետ խաղաղության հաստատմանը տարածաշրջանում», 15.4%-ը պատասխանել է՝ «միանշանակ այո», 22.8%-ը՝ «ավելի շուտ այո», 13.5%-ը՝ «ավելի շուտ ոչ», իսկ 41.6%-ը՝ «միանշանակ ոչ»:

«Այսինքն, այն թեզին, որ Վաշինգտոնյան համաձայնագիրը կնպաստի խաղաղությանը, հարցվածների գրեթե 55%-ը չի հավատում»,– ասաց Նավասարդյանը:

Մեկ այլ հարցով՝ Ադրբեջանը Սահմանադրության փոփոխությունը նշել է որպես վերջնական խաղաղության պայմանագիր ստորագրելու նախապայման: **Ո՞ր դատողության հետ եք առավել համաձայն»**, պատասխանները հետևյալն են.

«Սահմանադրության փոփոխությունը Հայաստանի ներքին գործն է, և որևէ երկիր, այդ թվում՝ Ադրբեջանը, իրավունք չունի ազդելու այդ գործընթացի վրա – 58%:

Սա Ադրբեջանի հերթական քաղաքական ծուղակն է, և անկախ փոփոխությունից՝ Ադրբեջանը համաձայնագիր չի ստորագրի – 25.1%:

Կբվեարկեմ Սահմանադրության փոփոխությանը, եթե դա բերի իրական և երկարաժամկետ խաղաղության Հայաստանի և Ադրբեջանի միջև – 12.2%:

Դժվարացել է պատասխանել – 4.7%»:

Նշենք, որ հարցումն անցկացվել է հեռախոսազանգի միջոցով 1,101 քաղաքացու շրջանում՝ օգոստոսի 25-ից սեպտեմբերի 3-ն ընկած հատվածում:

05.09.2025

Интервью Посла России в Армении С. П. Копыркина газете «Сюняц Еркир»

– Уважаемый г-н посол

Мы приветствуем Ваш визит в Сюникскую область.

Предлагаю начать с вопросов, касающихся событий, которые начались 8 августа в Вашингтоне и затрагивают Сюникскую область. Какую позицию занимает Россия относительно открытия в южной части Сюника так называемой «Дороги Трампа»? Как это будет сочетаться с теми обстоятельствами, что граница Армении и Ирана – фактически и граница ЕАЭС, а армяно-иранскую границу охраняют пограничные силы России. Обсуждает ли Москва тему «Дороги Трампа» с Тегераном?

– Один из неизменных базовых приоритетов внешней политики России – укрепление мира и стабильности на Южном Кавказе. В русле этой линии мы, естественно, поддерживаем любые усилия, направленные на нормализацию отношений между Арменией и Азербайджаном.

Что касается т.н. «дороги Трампа», то позиция России будет сформулирована после того, как у нас появится детальное понимание того, как данный транспортный проект будет реализовываться. Пока, насколько нам известно, соответствующая работа только начинается. Детали, касающиеся режимов грузового и пассажирского транзитов, обеспечения безопасности движения, еще только предстоит согласовать. В работе по разблокированию транспортных коммуникаций в регионе потребуется учет обстоятельств, связанных с членством Армении в ЕАЭС, а также опирающееся на двусторонние документы присутствие российских пограничников на армянско-иранской границе. Добавлю, что российская сторона открыта к консультациям по данным темам как с армянскими партнерами, так и с другими заинтересованными сторонами, включая Тегеран.

– Официальные представители России заявляют: «Трехсторонние договоренности 2020-2022 гг. между Арменией, Россией и Азербайджаном остаются в силе». Если это так, то каким образом два взаимоисключающих соглашения по урегулированию – Заявление от 9 ноября 2020 г. и Вашингтонская декларация от 8 августа 2025 г. – могут одновременно действовать на одной и той же территории?

– Хочу напомнить, что наша страна и лично президент В. В. Путин заложили основу процесса армяно-азербайджанского примирения. Трехсторонние договоренности лидеров России, Армении и Азербайджана 2020-2022 гг. не только остановили кровопролитие на земле, но и определили основные направления процесса нормализации отношений между Ереваном и Баку, включая выработку мирного договора, разблокирование экономических и транспортных коммуникаций, делимитацию и демаркацию границы, развитие контактов по линии гражданского общества.

Շարունակությունը՝ էջ 2

Հայաստանում ՌԴ-ի դեսպան Սերգեյ Կոպիրկինն այցելել է Ագարակի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատներ

ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Ս.Կոպիրկինը Սյունիքի մարզ կատարած հերթական ու ավանդական այցը սկսեց «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության գործունեությանը ծանոթանալով:

Պղնձամոլիբդենային այդ կոմբինատը տարածաշրջանի համակարգաստեղծ և խոշոր ընկերություններից մեկն է, որն ապահովում է ավելի քան 1100 մարդու (Ագարակի ամբողջ բնակչության մոտավորապես մեկ երրորդը) աշխատատեղ:

Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Բելյաևը ներկայացրեց կոմբինատի գործունեությունը՝ ընդգծելով, որ հետևողական քայլեր են ձեռնարկվում տեխնոլոգիական գործընթացների արդիականացման ուղղությամբ, այդ թվում՝ արտադրության ծավալների ավելացման, կոմբինատի շահագործման ժամկետի երկարաձգման և շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ :

Ռուսաստանի Դաշնության դիվանագիտական առաքելության ղեկավարը նաև հանդիպեց Ռուսաստանի ԱԴԾ սահմանային վարչության 127-րդ

Մեղրիի ջոկատի ղեկավարության հետ և ծանոթացավ հայ-իրանական պետական սահմանի պաշտպանության խնդիրներին, որոնք ստորաբաժանումը շարունակում է իրականացնել հաջողությամբ:

* * *

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ ղեկավարության հետ հանդիպման ընթացքում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին ծանոթացրել են արտադրության տեխնոլոգիական արդիականացման լայնածավալ ծրագրերին, ձեռնարկության աշխատողների սոցիալական աջակցության խոշոր ծրագրերին, ինչպես նաև կադրերի պատրաստման համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումներին:

Հանդիպմանը մասնակցած Հայաստանում Ռուսաստանի առևտրային ներկայացուցիչ Սերգեյ Սոլոմինը, Ռուսաստանի տնտեսական զարգացման նախարարության և Ռուսաստանյան արտահանման կենտրոնի ներկայացուցիչները դեսպանին տեղեկացրել են արտադրական գործընթացի օպտիմալացման ուղղությամբ ռուսական առաջատար տեխնոլոգիաների և ժամանակակից լուծումների ներգրավման հնարավորությունների մասին:

Այցի ընթացքում տեղի է ունեցել նաև Սերգեյ Կոպիրկինի հանդիպումը Սյունիքի մարզի գործարար շրջանակների այն ներկայացուցիչների հետ, ովքեր աշխատում են ռուսաստանյան գործընկերների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ առևտրատնտեսական կապերի զարգացմանը, ինչպես նաև ռուսական պրոֆիլային կառույցների կողմից գործարարներին աջակցություն ցուցաբերելու գործնական հարցեր: Ընդգծվել է միջտարածաշրջանային փոխգործակցության շրջանակում գործարար շփումների զարգացման ներուժը:

25.09.2025

Интервью Посла России в Армении С. П. Копыркина газете «Сюняц Еркир»

Սկիզբը՝ էջ 1

Положения этих договоренностей не потеряли актуальности и сегодня. Свою подпись под соответствующими заявлениями никто из лидеров не отзывал. То, как на практике они будут коррелировать с Вашингтонской декларацией от 8 августа 2025 г., – предмет обсуждений вовлеченных сторон. Мы исходим из того, что взаимоприемлемые развязки будут найдены по обоюдному согласию и на условиях, отвечающих интересам как Азербайджана и Армении, так и всех регионалов, включая Россию и Иран, которые активно взаимодействуют в рамках ЕАЭС.

В этой связи хотел бы напомнить о платформе регионального сотрудничества «3+3» с участием стран Южного Кавказа и их ближайших соседей, площадка которой предоставляет возможность предметного обсуждения насущных тем региональной повестки дня. Ожидаем, что армянские и азербайджанские партнеры в ближайшее время определятся по очередности приема следующей встречи на уровне глав внешнеполитических ведомств в данном формате.

– Есть еще одна тема, которую невозможно обойти. Речь идет о ситуации вокруг компании «Электрические сети Армении». Считаете ли Вы возможным подобные события в отношении других компаний с российским капиталом?

– Ответ на этот вопрос начну с констатации того, что Россия – крупнейший внешнеторговый и инвестиционный партнер Армении. Наши экономоператоры успешно работают в таких системообразующих отраслях армянской экономики, как информационные технологии, горно-добывающий и топливно-энергетический комплекс, ядерная энергетика, транспортная логистика, банковский сектор и т.д. Компании с российским капиталом – крупнейшие налогоплательщики

Եվ այդ ամենը՝ երկինքոտ Խուստուփի առջև պատասխանատվության գիտակցումից

Մտածում էինք՝ հին ավանդույթը՝ հյուսված անբարբառ սնոտիապաշտությունից, չխախտել և Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի 40-ամյակը չշնորհավորել ու այդ առիթով խոսք չասել:

Դետո, սակայն, մեր խոհերի դռան թակոցը լսեցինք... Իրականությունն էր: Առիթն օգտագործելու և Գևորգ Փարսյանի կերպարի պրիզմայով ներկայիս դրամային փոքրիշատե հայացք ձգելու պահանջ էր պարտադրում... Եվ ավանդույթը նահանջեց...

Այդքանով հանդերձ՝ համայնքապետի պաշտոնում նրա կատարածը ներկայացնելու կարիքը չտեսանք, քանզի և՛ կապանցու, և՛ մարզկենտրոն եկող-գնացողի թափանցող ու տեսանող աչքը նկատում է ամենը, որ կատարվել ու կատարվում է համայնքապետի նախաձեռնությամբ, տանտիրոջ ջանասիրությամբ ու տքնությամբ:

Մարդու, քաղաքացու, կառավարչի, շարքի առջևում կանգնածի նրա տեսակի դիտարկումը կարևորեցինք...

Սյունիքն իր անցած ճանապարհին (հատկապես օրհասական պահերին) երբեք արժանապատիվ ղեկավարների-լիդերների այնքան պակաս չի ունեցել, որքան հիմա՝ մեր օրերում:

Գևորգ Փարսյանը քչերից մեկն է, որ եղավ ու մնում է կոչվածի և ընտրյալի իր պատվանդանին՝ Սյունիքի բախտորոշ ներկայի սպառնալիքները տեսնելով և մեզ բաժին ընկած անեծք-փորձությունը հաղթահարելու սեփական պատկերացումներով, որ համահունչ է հազարավորների մտածումներին:

Քչերից մեկն է, որ գործով ու ապրած կյանքով հերքում է սուտը, կեղծավորությունը, երևութականությունը, երբ խոսվում է մեր փոքր հայրենիքի արժանապատվության ու անտրոհելիության մասին:

Հերքում է հորինվածքը, թե ժամանակների այս խաչմերուկում մեր արժեհամակարգի վրա օրավուր սաստկացող արշավում Սյունյաց աշխարհը կորցրել է հայրենատիրության ավանդական ոգին, թե Սյունիքում անդեմության շքերթ է՝ «համերաշխություն» քնքուշ անվամբ:

Մեր երկրամասի, համայնքի կենսունակ ու հավասարակշռված ընթացքի հուսալի ապագայի հիմքերը, որքան տեսնում ենք, համարել ու համարում է մեր փառավոր նախնիների օրինակին հետևելը:

Եղավ ու մնում է սյունիքյան-կապանյան մաքրամաքուր ավանդույթների, մեր ազգային-քրիստոնեական արժանիքների, մեր պետականության արթուն պահապանների, քնով չանցածների փաղանգում:

Եվ մարդկային այլ որակներ, որոնք բխում են երկինքոտ Խուստուփի առջև պատասխանատվության զգացումից ու այնտեղից հավերժորեն ծորող պատարագից, ցավի տեր դարձած մեր կարգավիճակից, հայոց հարավային մայրաքաղաքում ստեղծման հեքիաթի, լույս երազների անվախճանության գիտակցումից:

Իսկ Կապան քաղաքի, նաև մեր լեռների բարձունքներին թառած գյուղերի համար՝ ժողովրդական խոսքն է ակամա իրեն հիշեցնել տալիս՝ «Խուփը գլորավ՝ գտավ կճուճը»:

Օրվա խորհուրդը մեկ ուրիշ և չափազանց էական եզրակացության տեղիք է տալիս նաև. **որքան էլ փոխվեն «դերերն ու տերերը», միևնույն է Սյունիքի ընթացքը հավերժական է լինելու, իրական սյունեցին դիմակ չի դնելու և չի եղծվելու ոչ մի պարագայում, էն մի քանի հոգին հաշվի մեջ չեն ու չեն եղել...**

> *Գևորգ Փարսյանը քչերից մեկն է, որ եղավ ու մնում է կոչվածի և ընտրյալի իր պատվանդանին՝ Սյունիքի բախտորոշ ներկայի սպառնալիքները տեսնելով և մեզ բաժին ընկած անեծք-փորձությունը հաղթահարելու սեփական պատկերացումներով, որ համահունչ է հազարավորների մտածումներին:*

Ծնունդդ շնորհավոր, հարգելի պարոն Փարսյան:

Քո բնօրրան Կապանին, քո հայրենակիցներին ծառայելու ճանապարհը, որ ընտրել եք յոթ տարի առաջ, թող շարունակական լինի:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»
17.09.2025

Մեր և ձեր սիրելի «Սյունյաց երկիրը» 22 տարեկան է

2003 թ. հոկտեմբերի 1-ն էր... Նորահիմն պարբերականի անդրանիկ համարի ծնունդը ոչ միանշանակ ընդունվեց: Շատերը բարբաջում էին՝ թերթը երկար կյանք չի ունենալու, այդ օրերին ծնվող–մեռնող բազմաթիվ լրատվամիջոցների նման՝ մի քանի համարից հետո ասպարեզից դուրս է մղվելու...

«Սյունյաց երկիրը», մինչդեռ, կայացավ, դիմացավ և մարդկային երևակայության մեջ դժվար տեղավորվող բազում փորձություններից դուրս եկավ արժանապատվորեն...

Ավելին՝ տարիների ընթացքում (իր թվային հարթակների հետ մեկտեղ) դարձավ սյունեցիների մեծ մասի լրատվամիջոցը, դարձավ մեր երկրամասի հոգևոր–մշակութային կյանքի անքակտելի բաղադրիչը, դարձավ մարզի հասարակական–քաղաքական կյանքի սյունիքակենտրոն և պետականակենտրոն առանցքներից մեկը:

Հիմա, սակայն, անիմաստ զբաղմունք է անցյալի դրականի կամ բացասականի մասին խոսելը:

Հազարամյակներ շարունակ ղզլբաշին, սելջուկին, թաթարին, օսմանցուն, երեկ չէ՝ մեկ էլ օրը մեյդան ընկած ադրբեջանցուն արժանապատվորեն դիմակայած և իր ինքնությունը չաղարտած Սյունիքը հիմա կանգնած է աղետներ գուժող սպառնալիքների դեմ–հանդիման:

Հիմա Սյունիքի ճակատագիրն օտար ափերում են վճռում և մեզանից միայն օվացիաներ են պահանջում:

Հիմա հայրենական օջախը սիրելն ու կարոտելը, նախնյաց շիրիմների առջև ծնկելը ոչ նորաձև են համարվում:

Իսկ այստեղ (ինչ–ինչ հանգամանքների բերումով) ժամանակավորապես ծվարածները և մեր դժբախտության վրա ձեռքեր տաքացնողները ծափահարություններով են արձագանքում Սյունիքը հարավից նույնպես անդամահատելու, մեր դարավոր և բնական դաշնակիցներին երկրամասից դուրս հանելու նախաձեռնությանը:

Որքա՜ն ճշգրիտ է բյուրեղ Բակունցը բնութագրել տեղական ցեցերի այդ տեսակը՝ **«Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»:**

Մեր երկրամասի ու մեր պետականության համար բախտորոշ այս հանգրվանում «Սյունյաց երկիրը» հայրենատեր սյունեցիների հետ է, ովքեր մերժում են ստի հրավառությունը, մերժում են ոչինչ չասող բառերով մեր լեռնաշխարհի տրոհումը «հիմնավորող» ցնորամտությունը:

Սիրելի հայրենակիցներ

Շնորհավորում ենք ձեզ՝ «Սյունյաց երկրի» ծննդյան 22-րդ տարեդարձի կապակցությամբ:

Խոնարհվում ենք մեր այն բարեկամների հիշատակի առջև, ովքեր ժամանակին աջակցել են թերթը վեմ քարի վրա կանգնեցնելուն–բարձրացնելուն. բոլորին հիշում ենք անուն առ անուն:

Երախտագիտություն ենք հայտնում նրանց, ովքեր կարևորել ու կարևորում են «Սյունյաց երկրի» տեղն ու դերը հայոց Սյունիքի պաշտպանության առաջապահ դիրքերում:

Հավաստում ենք վերստին՝ «Սյունյաց երկիրը» բոլոր սյունեցիների հարթակն ու խոսափողն է, գործընկերն ու բարեկամը:

Հավատում ենք՝ Հայոց մեծ գուսանի աղոթք դարձած խոսքը կենսունակ է լինելու հար՝ «Սյունյաց հողը անարատ է, / Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է», և որևէ ստրուկի երազանք՝ հանգցնելու «Սյունյաց երկիր» կանթեղը, իրականություն չի դառնալու:

Նաև համոզմունք ենք հայտնում՝ Սյունիքը եղել, կա և կմնա հայոց անկախ պետականության ողնաշարը, հայոց արժանապատվության գլխավոր արյունատար անոթը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

В бюджет Республики, активно участвующие при этом в реализации социальных проектов и программ. Исходим из того, что армянские партнеры, в свою очередь, заинтересованы в сохранении и преумножении решающего вклада торгово-экономического сотрудничества с Россией в рост благосостояния и укрепление социально-экономической устойчивости страны.

Посольство и Торгпредство России находятся в тесном контакте с отечественными бизнесменами, а также с ответственными официальными представителями Армении. Пока каких-либо тревожных сигналов от российских экономоператоров не поступало. Кроме того у нас есть ритмично работающий двусторонний механизм – Межправительственная комиссия по экономическому сотрудничеству на уровне вице-премьеров, на площадке которой мы обсуждаем все накопившиеся в экономической сфере вопросы в конструктивном ключе, присущем нашим союзническим отношениям.

– Многие люди в Армении считают, что с выводом Российской военной базы из Гюмри угрозы безопасности не только Сюнику, но и независимости Армении возрастут. С учетом этого мы бы хотели узнать о правовых основах и сроках юрисдикции действующего договора о пребывании в Республике 102-ой российской военной базы.

– Вопроса вывода 102-ой военной базы нет в повестке дня двусторонних отношений. Об этом четко на всех уровнях заявляет и армянская сторона. Российское военное присутствие – это по-прежнему важнейшая несущая конструкция системы безопасности Армении и важный фактор региональной стабильности. При этом наши военные никому в регионе не угрожают.

Изначально Договор о российском военном присутствии на территории Республики Армения был подписан в Москве 16 марта 1995 г. на 25 лет с автоматическим продлением каждые 5 лет. Позднее, в 2010 г. в Ереване нашими странами был подписан дополнительный протокол к документу, который продлил сроки дислоцирования воинских формирований Вооруженных Сил России на территории Армении до 2044 г. с возможностью пролонгирования каждые 5 лет.

– И последний вопрос. В международных средствах массовой информации, а также на нашей информационной площадке упорно фигурирует точка зрения, что Россия вытесняется из Южного Кавказа. Насколько это соответствует действительности и каково место региона во внешнеполитической стратегии Вашей страны?

– Отделять Россию от Южного Кавказа – заведомо бессмысленная затея. Это не позволят сделать ни география, ни совместная история, ни объем многоплановых связей России с закавказскими государствами. Тем не менее отдельные внешние игроки высказывают подобные абсурдные идеи, лишь обнажая собственные устремления и слабое понимание региональных реалий.

Повторюсь – неразрывная связь России с Южным Кавказом предопределяет нашу жизненную заинтересованность в прочном мире и стабильности в регионе, в его процветании и раскрытии транспортного потенциала.

– Господин посол. Вы ответили на вопросы, волнующие тысячи сюникцев, что очень важно для нашего края в судьбоносное время. Большое Вам спасибо за интересное интервью.

БЕСЕДУ ВЕЛ САМВЕЛ АЛЕКСАНЯН
25.05.2025 Г.

«Գրական Տաթև». սպասված ժողովածու Սյունիքում

Սեպտեմբերի 27-ին տաթևացիները նախ այցելեցին Արցախյան 3-րդ պատերազմում հինգ տարի առաջ հերոսաբար նահատակված համազուղացի Լևոն Դանիելյանի ու Հարութ Մուրադյանի շիրիմներին և ոգեկոչեցին նրանց հիշատակը...

Այնուհետև Տաթևի Սուրեն Առաքելյանի անվան միջն. դպրոցի դահլիճում շնորհանդես էր՝ Ռոմիկ Հարությունյանի խոնարհ տքնությամբ հրատարակված «Գրական Տաթև» 3-րդ գրքի շնորհանդեսը:

Դեռևս 2018-ին նպատակ էր դրվել ի մի բերել և առանձին ժողովածուով հրատարակել տաթևացի հեղինակների գրական ստեղծագործությունները:

Եվ նույն տարում լույս տեսավ «Գրական Տաթև» անվամբ ժողովածուի 1-ին գիրքը, որում հրատարակվեցին ծագումով տաթևացի՝ առնվազն Սյունիքում հայտնի հեղինակների, այնպես և գրական ոլորտում նոր-նոր քայլեր անող համազուղացիների ստեղծագործությունները:

Նախաձեռնությունը հետաքրքրություն էր առաջացրել ոչ միայն համազուղացիների շրջանում: Այդ հանգամանքն էլ հավելյալ գործոն եղավ, որպեսզի 2024-ին հրատարակվի ժողովածուի 2-րդ գիրքը: Դրանում տեղ գտան 1-ին գրքից ընթերցողին ծանոթ դեմքեր, նաև նոր անուններ:

Եվ ահա ընթերցողի սեղանին է ժողովածուի 3-րդ գիրքը (2025 թ.), **որի շնորհանդեսին հավաքվել էին ոչ միայն գրքում ընդգրկված հեղինակներն ու նրանց մերձավորները, այլև դպրոցականներ, գյուղի բնակիչներ:**

Գիրքը նվիրված է Մեծ հայրենականում Խորհրդային Միության ժողովուրդների տարած հաղթանակի 80-ամյակին: Արյունահեղ այդ պատերազմին մասնակցություն են ունեցել նաև Տաթևի բնակիչները: Ճակատ մեկնած 550 տաթևացիներից 278-ը զոհվեց պատերազմում, իսկ համազուղացի Սուրեն

Առաքելյանն արժանացավ Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման:

Այս գրքում նույնպես ընդգրկվել են նախորդ թողարկումներից ծանոթ դեմքեր, ինչպես և նոր ստեղծագործողներ՝ Սուրեն Գրիգորյան, Հայկ Պետրոսյան, Ռոմիկ Հարությունյան, Սուրեն Վարդանյան, Աշխեն Հարությունյան, Վիկտորիա Պետրոսյան, Վարդիթեր Խաչատրյան-Վարդանյան, Ղուկաս Սիմոնյան, Մարինե Հակոբյան, Էդուարդ Հարենց, Վարդան Իվանյան, Անի Վարդանյան, Նելլի Պետրոսյան, Նավասարդ Խաչատրյան, Լիլիթ Պողոսյան:

Շնորհանդեսին ընտրվել էր հեղինակներին ու նրանց ստեղծագործությունները ներկայացնելու յուրօրինակ ձև. որոշ հեղինակներ անձամբ էին ընթերցում իրենց ստեղծագործությունները՝ Վարդիթեր Խաչատրյան-Վարդանյան, Վարդան Իվանյան, Ռոմիկ Հարությունյան, Սուրեն Վարդանյան:

Մյուս հեղինակների որոշ ստեղծագործություններ ընթերցեցին դպրոցի աշակերտուհիներ Սվետլանա Վարդազարյանը և Միլենա Մինասյանը:

Այդ ամենին հաջորդեցին Տաթևի միջն. դպրոցի աշակերտների երաժշտական-պարային կատարումները՝ շնորհանդեսը վերածելով գրական-երաժշտական գեղեցիկ ցերեկույթի:

Խոստովանենք՝ հետաքրքիր էր ունկնդրել ներկայացվող ստեղծագործություններից ամեն մեկը: Եթե դրանց մի մասը գեղարվեստական առումով, բանաստեղծականացման տեսակետից դեռևս ճանապարհ ունեն անցնելու, ապա գաղափարական առումով, ասելիքով, առանց չափազանցության, հստակ ու անթերի էին:

Տաթևացի ստեղծագործողների խոսքը պարուրված էր ազգային-հայրենասիրական-քրիստոնեական արժեքների հանդեպ ունեցած հավատամքով, մեր նախնիների փառքը ոգեկո-



չելով. Ավարայր ու Սարդարապատ, Արցախյան գոյամարտ, Հայոց մեծ եղեռն, Սրբազան Արարատ ու Գյազբել, Արամազդ ու Մեծ Իշխանասար, Դավիթ Բեկ ու Գարեգին Նժդեհ...

Այդ ստեղծագործությունները, կարծեք, իրական Հայաստան փնտրողներին յուրովի հիշեցնում էին՝ իրական Հայաստանը հենց Սյունիքն է՝ մեր ազգային ու քրիստոնեական արժեքների հանդեպ ունեցած անբեկանելի հավատարմությամբ:

«Գրական Տաթև» ժողովածուի լույս ընծայման առիթով Ռոմիկ Հարությունյանին երախտագիտության խոսք հղեցին Սուրեն Վարդանյանը, ՀԳՄ Սյունիքի բաժանմունքի ներկայացուցիչ Վարուժան Գալստյանը, Տաթևի Սուրեն Առաքելյանի անվան միջն. դպրոցի տնօրեն Նորվարդ Մովսիսյանը, «Սյունյաց երկիր» թերթի և «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի խմբագիր Սամվել Ալեքսանյանը:

* * *

Ինչպես նշվեց՝ «Գրական Տաթև» ժողովածուի հրատարկման նախաձեռնողն ու հեղինակը Ռոմիկ Հարությունյանն է:

Միաժամանակ՝ 1-ին գրքի հրատարակումից հետո, նախաձեռնությանն ավելի կանոնակարգված ընթացք տալու և գեղարվեստական հուն մղելու նպատակով ստեղծվել էր խմբագրական խորհուրդ՝ մասնակցությամբ Էդուարդ Հարենցի, Սուրեն Վարդանյանի, Նորվարդ Մովսիսյանի և Ռոմիկ Հարությունյանի:

Եվ, այդքանով հանդերձ, կուզենայինք, որ նախաձեռնության հեղինակի մասին ընթերցողն ավելին իմանար:

Ռոմիկ Հարությունյանը ծնվել է 1945 թ. Տաթևում, քիմիական գիտությունների դոկտոր է և պրոֆեսոր, 2007-ից (11 տարի շարունակ) Երևանի պետական համալսարանի անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչն էր, «Հայ քիմիկոսներ. կենսագրական հանրագիտարան»-ի համահեղինակը (2021 թ.):

Քիմիայի ոլորտում ճանաչված գիտնականը՝ միևնույն ժամանակ, իր ծննդավայրի նվիրյալներից է: Հայրենանվեր գործերից հատկապես հիշատակման արժանի է «Հավերժի ճամփորդներ» գրքի, ինչպես և (Դավիթ Հարությունյան որդու հետ մեկտեղ) «Տաթևի տեղեկատու հանրագիտարան»-ի (2023 թ.) հրատարակումը, որոնք, հիրավի, սկզբնաղբյուրային նշանակություն ունեն:

Ռոմիկ Հարությունյանը հեղինակ է նաև մի շարք արձակ ու չափածո ստեղծագործությունների, որոնց մի մասին ծանոթացանք «Գրական Տաթևում»:

Ստեղծագործությունների քնարական հերոսը բնօրրան Տաթևն է, հայրենի եզերքը: Ակնհայտ է նրա մտահոգությունը հայոց պետականության ճակատագրի, Սյունյաց աշխարհի վաղվա օրվա, հայոց արժանապատվության հանդեպ:

Շնորհանդեսի ընթացքում չէր կարելի չնկատել՝ Ռոմիկ Հարությունյանն ամբողջապես տեղյակ էր ժողովածուում ընդգրկված յուրաքանչյուր հեղինակի ստեղծագործական աշխարհին, ստեղծագործությունների թույլ և ուժեղ կողմերին, չէր թաքցնում հիացմունքն ու ակնկալիքը, որ գրական այդ ծիլերի մի մասը ժամանակի ընթացքում անպայման կաճի, կհասունանա...

Հայրենի եզերքի նվիրյալ Ռոմիկ Հարությունյանի օրինակը, անշուշտ, ընդօրինակման արժանի է:

Սյունյաց աշխարհի հոգևոր-մշակութային անդաստանը, որ իսկապես բացառիկ է ու աստվածատուր, իր սահմաններն ավելի կընդլայներ, եթե մարզի ամեն մի բնակավայրում նման հետևողականությամբ ի հայտ բերվեին ստեղծագործող անձինք ու հանրայնացվեին նրանց ուշագրավ գործերը:

ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Վերաօծվեց Լորի Սուրբ Գևորգ եկեղեցին

Սեպտեմբերի 27-ին՝ Սուրբ Գևորգ զորավարի հիշատակության օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանի հանդիսապետությամբ Լորի Սուրբ Գևորգ եկեղեցում տեղի ունեցավ վերաօծման հանդիսավոր արարողությունը: Արարողությանը ներկա էին թեմի հոգևոր դասը, բազմաթիվ հավատացյալներ և հյուրեր:

Օրը սկսվեց Դարբասի Սուրբ Ստեփանոս եկեղեցու բակից մեկնած ուխտերթով, որին հավատացյալները միացան ուխտավորի խոնարհությամբ և աղոթական նվիրումով: Ժամը 11:00-ին կատարվեց Սուրբ Գևորգ եկեղեցու վերաօծումը, որին հաջորդեց Սուրբ և Անմահ պատարագը:

Այս օրհնաբեր օրը համայնքի կյանքում դարձավ նոր սկիզբ. վերաօծված եկեղեցին կրկին բացեց իր դռները հավատացյալների առջև՝ որպես աղոթքի տուն և հոգևոր կյանքի կենտրոն:

Միևնույն ժամանակ տեղի ունեցավ Խրիմյան Հայրիկին նվիրված հուշաքարի բացման արարողություն:

Միջոցառմանը ներկա էին Սիսիան և Կապան համայնքների ղեկավարներ Հովսեփ Առաքելյանն ու Գևորգ Փարսյանը:

ՀՀ-ում Կանադայի դեսպանը Կապանի համայնքապետարանում

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը սեպտեմբերի 24-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան Էնդրյու Թըրներին: Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ ԱԳՆ Ամերիկյան երկրների վարչության, ԱՄՆ և Կանադայի բաժնի վարիչի պարտականությունները կատարող Սերգեյ Մուրադյանը:

Համայնքի ղեկավարը ողջունել է դեսպանի այցը Կապան և կարևորել վերջին տարիներին հայ-կանադական հարաբերությունների ակտիվացումը՝ ընդգծելով, որ դրանց դրական ազդեցությունը ժամանակին զգալի է եղել նաև տեղական մակարդակում, մասնավորապես հանքարդյունաբերության ոլորտում: Այս համատեքստում նա հավելել է, որ Կապանն այսօր քայլում է կայուն զարգացման ուղիով և բաց է ներդրումային ծրագրերի ու միջազգային համագործակցության համար:

Դեսպանն իր հերթին ևս շնորհակալություն է հայտնել ընդունելության համար և ընդհանրական կերպով ներկայացրել դեսպանության գործունեության հիմնական ուղղությունները, խոսել նախատեսվելիք ծրագրերի մասին, ինչպես նաև կարևորել մայրաքաղաքից դուրս մարզերի և համայնքների հետ համագործակցության անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև երկկողմ հարաբերությունների զարգացման ներուժին՝ հատկապես բարձր տեխնոլոգիաների, զբոսաշրջության, գյուղատնտեսության, ներդրումային միջավայրի և փորձի փոխանակման ոլորտներում համագործակցության հնարավորություններին:

Կողմերը մտքեր են փոխանակել նաև տարածաշրջանային ընդհանուր իրավիճակի և վերջին զարգացումների շուրջ:

//

«Մեղրի-1» պոմպակայանի նոր պոմպը շահագործման հանձնվեց

Մեղրի համայնքի բնակիչների երկար սպասված երազանքն այլևս իրականություն է:

Մեղրիում ավարտվել են «Մեղրի-1» պոմպակայանի արդիականացման աշխատանքները. նոր պոմպը պաշտոնապես հանձնվել է շահագործման:

Նախագիծը մեկնարկել էր համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանի նախաձեռնությամբ, ով վերահսկել է գործընթացի բոլոր փուլերը՝ ապահովելով աշխատանքների սեղմ ժամկետներում և բարձր որակով իրականացումը:

Նոր պոմպի գործարկումը հնարավորություն կտա կայունացնել ոռոգման համակարգը և լուծել Արաքսաշեն թաղամասի բնակիչների բազմամյա ջրամատակարարման խնդիրը:

Նշենք, որ նոր պոմպի գործարկմամբ կունենանք մոտ 40 հա ջրարբիացված հողատարածք:

Հանդիպում-քննարկում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների և Մեղրի համայնքի մեղվապահների միջև

Սեպտեմբերի 22-ին Մեղրիի համայնքապետարանում հյուրընկալվեցին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության անասնաբուծության վարչության ձկնաբուծության և մեղվաբուծության բաժնի գլխավոր մասնագետ Սիլվա Հակոբյանը և ավագ մասնագետ Ջոն Սիմոնյանը:

Հանդիպման նպատակն էր վերհանել և քննարկել համայնքում արձանագրված մեղվաընտանիքների խնդիրները՝ գտնելու դրանց հնարավոր լուծումները:

Քննարկման ընթացքում մեղվապահներն անդրադարձան մեղվաընտանիքների պահպանման գործընթացում առաջացած հիմնական դժվարություններին և դրանց հետ կապված մտահոգություններին: Մասնագետները պատասխանեցին մեղվապահների հնչեցրած հարցերին, ներկայացրեցին հնարավոր պատճառահետևանքային կապերը, ինչպես նաև առաջարկեցին մասնագիտական լուծումներ և կիրառելի խորհուրդներ՝ մեղվաընտանիքների կենսունակության վերականգնման և արտադրողականության բարձրացման ուղղությամբ:

Հանդիպումը, որը վարում էր համայնքապետ Խաչատուր Անդրեասյանը, անցավ կառուցողական և փոխըմբռնման մթնոլորտում:

Հանդիպման ավարտին մասնագետներն իրենց պատրաստակամությունը հայտնեցին շարունակել աջակցությունը և համագործակցությունը մեղվապահների հետ՝ խնդիրների լուծման և ոլորտի բարելավման նպատակով:

ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Մեղրիի բնակավայրերում առաջացած խմելու ջրի մատակարարման խնդիրների կարգավորման նպատակով

Ագարակ, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար և Լեհվազ բնակավայրերում առաջացած խմելու ջրի մատակարարման խնդիրների կարգավորման նպատակով հանդիպում է կայացել Մեղրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Բագրատ Զաքարյանի, «Վեոլիա Ջուր» ընկերության ներկայացուցիչ Էմիլ Ադամյանի և վարչական ղեկավարների միջև:

Քննարկվել են բնակիչների կողմից բարձրացված խնդիրները, որոնց մի մասը տեղում լուծում է ստացել:

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն նույնպես աջակից է եղել համայնքին, իրենց կողմից իրականացվել են վթարավերականգնողական աշխատանքներ:

Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել շարունակական համագործակցության և օպերատիվ արձագանքի շուրջ՝ խմելու ջրի անխափան մատակարարումն ապահովելու համար:

Ներկայումս նշված բնակավայրերում խմելու ջուրը մատակարարվում է նորմալ ռեժիմով:

Նախատեսված ժամկետի մեջ չտեղավորվող շինարարություններ

Հանրապետության կառավարության որդեգրած ծրագրի համաձայն՝ մինչև 2026 թվականը կիրականացվի 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցում, վերակառուցում կամ հիմնանորոգում: Իհարկե, հանրապետությունում դպրոցներ կառուցելը, հիմնանորոգելը, վերակառուցելը միանգամայն ողջունելի, սպասված քայլ է, խնդիրն այլ է, թե նման քանակի դպրոցական կառույց հնարավո՞ր է կյանքի կոչել կառավարության նախանշած ժամկետում, որը և քննարկվում է ստորև: **Ըստ կառավարության որոշման՝ ծրագրում ընդգրկված է 43 դպրոց Սյունիքից. 16 դպրոց պիտի կառուցվի Գորիսի, տասը դպրոց՝ Կապանի, 14-ը՝ Սիսիանի, երեքը՝ Մեղրիի տարածաշրջաններում:**

Ինչևէ, կապ հաստատեցինք դպրոցների տնօրենների հետ՝ տեղեկանալու շինարարության ընթացքի մասին: Նախ եղանք կառուցվող թիվ 6 դպրոցի շինհրապարակում: Կապանի թիվ 6 դպրոցի (տնօրեն՝ Մարինե Դավթյան) ուսումնական պարապմունքներն անցկացվում են Հունան Ավետիսյանի անվան թիվ 9 ավագ դպրոցում, իսկ թիվ 6 հիմնական դպրոցի տեղում կառուցվում է 648 տեղանոց դպրոցական շենք, որի շինարարությունն իրականացնում է «Ապառաժ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ընթանում են առաջին հարկի կառուցման շինարարական աշխատանքները: Ըստ շինարարությունը եզերող ցանկապատին փակցված ցուցապաստառի՝ շինարարության մեկնարկը 2024-ին է եղել, ավարտը կլինի 2026 թվականին: Ծրագրի պատվիրատուն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն է:

Գեղանուշի դպրոցի տնօրեն Գայանե Գրիգորյանը փոխանցեց, որ կրթահամալիրի կառուցման ծրագիրն իրենցից վերցրել են, դպրոցի հիմնանորոգում պիտի լինի, բայց առայժմ ոչ մի փաստաթուղթ չկա այդ մասին:

Կապանի Սյունիք թաղամասի դպրոցի հին ուսումնական շենքում ընթանում են ուսումնական պարապմունքները, իսկ կողքին կառուցվում է նոր շենքը, որը նախատեսված է 144 երեխայի համար, այդ թվում՝ 40-ը՝ մանկապարտեզի: Դպրոցական հին մասնաշենքը գտնվում էր վթարային վիճակում և տարիներ ի վեր չէր նորոգվել:

Ծավի դպրոցի տնօրեն Յուրիկ Մարտիրոսյանի փոխանցմամբ՝ դպրոցի երկու մասնաշենքից մեկը քանդել են, որի տեղում պիտի կառուցվի նոր կրթահամալիրը, բայց առայժմ շինարարական աշխատանքներ չեն սկսվել: Շինարարությունը պիտի իրականացնի իրանական կազմակերպություն:

Արծվանիկի միջնակարգ դպրոցի տնօրեն Լուսինե Հարությունյանը խմբագրությանը տեղեկացրեց, որ նոր կրթահամալիրի շինարարությունն ընթանում է, իրենք դասերն անցկացնում են հին մասնաշենքում, իսկ նորը կառուցվում է հնի կողքին: 220 տեղանոց դպրոց կլինի, ևս 80 տեղ նախատեսվում է մանկապարտեզի համար: Ըստ ամենայնի 2026-27 ուսումնական տարում դպրոցը պատրաստ կլինի շահագործման: Ի դեպ, օպտիմալացման ծրագրի շրջանակում Դավիթբեկի դպրոցը պետք է միավորվի Արծվանիկի դպրոցի հետ: Սահմանամերձ Դավիթբեկ գյուղի դպրոցը միացնել Արծվանիկի դպրոցին՝ ոչ մի տրամաբանության մեջ չի տեղավորվում...

Ինչպես հայտնեց Շվանիձորի միջնակարգի դպրոցի տնօրեն Ալեն Ավետիսյանը, դպրոցի հիմնանորոգման աշխատանքները սկսվել են հուլիսից, իսկ պարապմունքներն անցկացվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով, նախատեսվում են ավարտել այս տարվա դեկտեմբերին: Մեր զրուցակցի փոխանցմամբ՝ ինքը չի հիշում, թե երբևէ դպրոցում նման հիմնանորոգում եղել է. **«Կոսմետիկ նորոգումներ եղել են, բայց այսպես հիմնովին, առաջին անգամ է արվում»:**

Մեղրու տարածաշրջանի Ագարակ քաղաքի միջնակարգ դպրոցի կողքին կառուցվում է նորը՝ 864 տեղանոց, շինարարությունն իրականացնում է «Մեղրու ճանապարհների շահագործում և շինարարության ձեռնարկություն» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Ազատ Գասպարյան): Ինչպես հայտնեց դպրոցի տնօրեն Անժելա Աղայանը՝ դպրոցի մի մասնաշենքում (երկուսը քանդել են) ընթանում են ուսումնական պարապմունքները, որը հետագայում ևս քանդվելու է՝ տեղը զիջելով կանաչ տարածության: Դպրոցի շինարարության ավարտ է նախատեսվել 2027 թվականի նոյեմբերի 30-ը, բայց շինարարները խոստացել են դպրոցական շենքի շահագործումն ավարտել ժամկետից շուտ՝ մանկավարժներին և աշակերտներին ազատելով ավելորդ անհարմարությունից:

Կառավարության վերոհիշյալ որոշմամբ Մեղրի համայնքի Լեհվազ գյուղի դպրոցի համար նախատեսվում էր կառուցել 144 տեղանոց կրթահամալիր: Ինչպես հայտնեց դպրոցի տնօրեն Յանա Պողոսյանը՝ իրոք նախատեսված էր կրթահամալիր կառուցել, բայց Լեհվազում հարմար տարածք (մեկ հեկտար) չգտան: Ծրագրի պատասխանատուները փոխանցեցին, թե կրթահամալիրի կառուցում չի լինի, այլ դպրոցի շենքը հիմնովին կնորոգեն և շենքին կից մի քանի դասարան կավելացնեն: Ի դեպ, այդ դպրոցը նաև մարզադահլիճ չունի: Այդ ամենը եղել է անցած ամռանը: Դրանից հետո ոչ մի արձագանք...

Հունիսի 10-ից Կապանի տարածաշրջանի Աճանանի միջնակարգ դպրոցում նորոգում սկսեցին, որից հետո դպրոցական մասնաշենքը կկահավորվի նոր գույքով: Սկզբում նախատեսվում էր կառուցել 144 տեղանոց կրթահամալիր, որ փոխարինվեց հիմնանորոգումով: Դպրոցի տնօրեն Սոնա Հովհաննիսյանի տեղեկացմամբ՝ առայժմ պարապմունք-

Հայացք 2025/26 ուստարվա ընդունելությանը, նվազող թվեր...

Հանրապետության բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մեկ ամիս է, ինչ մեկնարկել է նոր ուսումնական տարին:

2025-ին Սյունիքի մարզից 751 հոգի դիմել էր ընդունվելու բարձրագույն ուսումնական հաստատություններ: Նրանցից 566-ին հաջողվել է դառնալ ուսանող:

Այս անգամ որոշեցինք ներկայացնել մարզի ուսումնական հաստատություններում ընդունելության պատկերը (Կապանի ուսումնական հաստատություններին արդեն անդրադարձել ենք): Հրապարակումը հագեցած է թվերով, ինչն ավելորդ «ծանրաբեռնվածություն» է հաղորդում տեքստին, բայց այս դեպքում առանց թվեր վկայակոչելու՝ հնարավոր չէ տալ քննարկվող թեմայի իրական պատկերը:

Ինչպես տեղեկացրեց Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Տիգրան Վանդունցը, համալսարան դիմած 69 դիմորդից 44 հոգի հաղթահարել է ընդունելության շեմը և դարձել ուսանող: Այժմ ընթանում են բակալավրի հեռակա ուսուցման ընդունելությունը, փաստաթղթերի ընդունումը: Ընդունելությունը կազմակերպում է գնահատման և թեստավորման կենտրոնը նույն մեխանիզմով, ինչ բակալավրի առկա ուսուցման ընդունելության դեպքում: Դրան զուգահեռ սեպտեմբերի 5-ից համալսարանում մեկնարկել է 2025-26 ուստարվա մագիստրատուրայի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ ընդունելությունը «Ձեռնարկությունների տնտեսագիտություն», «Իրավագիտություն», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Անգլերեն և գրականություն» մասնագիտությունների գծով:

Գորիսի համալսարանի այս տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ հավելյալ տեղեկություններ հայթայթեցինք Գնահատման և թեստավորման կենտրոնից, որի խոսնակ Խաչանուշ Գրիգորյանը հայտնեց, թե առավել շատ դիմորդներ հայտագրվել են «Տնտեսագիտություն» (25-ից ընդունվել է 14-ը) և «Անգլերեն և գրականություն» (19 հայտագրվածից ընդունվել է 14-ը) մասնագիտությունների գծով: Ինչպես երևում է՝ նվազ հետաքրքրություն կա հումանիտար մասնագիտությունների հանդեպ, այսպես՝ «Պատմություն» մասնագիտությամբ հայտագրվել է մեկ հոգի, ով հաղթահարել է ընդունելության շեմը, «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ վեց հայտագրվածից ընդունվել է չորսը, «Կերպարվեստ» մասնագիտությամբ (չորսից չորսը): «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ չորս հայտագրվածից ընդունվել է մեկ հոգի: «Կենսաբանություն» (երկու հայտագրված) և «Էլեկտրաէներգետիկա» (մեկ հայտագրված) մասնագիտություններով ոչ ոք չի հաղթահարել ընդունելության շեմը:

Գորիսի պետական քոլեջն այս տարում ընդունվողների աճ է գրանցել. կրթօջախ է ընդունվել 161 սովորող, նախորդ տարվա 152-ի փոխարեն: 2025 թվականի ընդունելությունը հետևյալ թվական պատկերն է ներկայացնում ըստ մասնագիտությունների՝ «Քույրական գործ» (հինգամյա կրթության բազայով)՝ 13 սովորող, «Քույրական գործ» (տասներկուամյա կրթության բազայով)՝ 18 հոգի, «Դեղագործություն» (տասներկուամյա կրթության բազայով)՝ 16 հոգի, «Նախադպրոցական կրթություն»՝ 10 սովորող, «Լուսանկարչություն»՝ 14 հոգի, «Ատաղձագործական գործ»՝ 19 սովորող, «Հաշվողական տեխնիկա»՝ 19 սովորող, «Վարսավիրական գործ»՝ 11 հոգի, «Համակարգիչների շահագործում»՝ 19 հոգի, «Խոհարարական գործ»՝ 19 հոգի: Այս կրթօջախում կառավարության կողմից գերակա է ճանաչվել «Ատաղձագործական գործ» մասնագիտությունը: Քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանի փոխանցմամբ՝ կրթօջախում ուսանում է 344 սովորող:

Մեղրու պետական քոլեջ այս տարի ընդունվել է 61 ուսանող՝ 56-ը՝ անվճար, հինգը վճարովի համակարգում: Ըստ մասնագիտությունների տեղերը բաշխվել են հետևյալ կերպ՝ 20 հոգի քոլեջ է ընդունվել «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտացմամբ, 14-ական՝ «Հաշվապահական հաշվառում» ու «Տրանսպորտում փոխադրումների կազմակերպում և կառավարում» մասնագիտություններով, «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությամբ՝ 13 հոգի: Քոլեջում «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ ընդունելությունը կրթությունը կազմակերպվում է միջնակարգ կրթության (12-ի բազա) հիմքով: Անհրաժեշտ թվով դիմորդներ չեն լինում խումբ ձևավորելու համար, իսկ «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության ուսուցումն իրականացվում է հեռակա կարգով: Ինչպես տեղեկացրեց քոլեջի տնօրեն Թամարա Հովհաննիսյանը, քոլեջում 190 սովորողից 156-ը կրթություն է ստանում պետպատվերի շրջանակում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը «Սյունյաց երկրին» փոխանցեց, որ իրենց կրթօջախ միջին մասնագիտական կրթական ծրագրով այս տարի ընդունվել է 125 հոգի: Բակալավրիատի կրթական ծրագրով՝ «բուհ-բուհ» համակարգով երկրորդ կուրս է ընդունվել 22 հոգի, իսկ առաջին կուրսի համար արդեն դիմել են 40-ից ավելի մարդ, ընդունելության արդյունքները պարզ կլինեն հոկտեմբերի առաջին օրերին: Բակալավրի կրթական ծրագրով ուսուցումն իրականացվում է հեռակա: Գ. Խաչատրյանը նաև հայտնեց, որ իրենք հանրապետությունում առաջիններից են, որ անցել են «դուալ» կրթական ծրագրի: Դրա էությունն այն է, որ սովորողն ուսումնառության 65-70 տոկոսը անցկացնում է արտադրությունում, 30 տոկոսը՝ լսարանում:

Ինչ վերաբերում է մասնաճյուղի համակազմին, Գագիկ Խաչատրյանը տեղեկացրեց, որ երբ ստանձնեց կրթօջախի ղեկավարությունը, 60 ուսանող կար: Հիմա միջին-մասնագիտական կրթական ծրագրով 350 ուսանող ունեն:

Սիսիանի պետական քոլեջի տնօրեն Հրանուշ Բաղդասարյանի փոխանցմամբ՝ կրթօջախում միջին մասնագիտական և արհեստագործական կրթական ծրագրեր են իրականացվում «Նախադպրոցական կրթություն», «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», «Մեղվաբուծություն» մասնագիտացումներով: Այս տարի ընդունելություն չի կայացել «Դիզայն», «Քույրական գործ» մասնագիտություններով: Արհեստագործական կրթական ծրագրով քոլեջում գործում է «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», «Համակարգիչների շահագործում», «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտությունները: Ի դեպ, այս վերջինը կառավարության որոշմամբ գերակա է հռչակված և այդ խմբում սովորողները ստանում են բարձր կրթաթոշակ՝ 50 հազար դրամ:

Քոլեջի տնօրենի փոխանցմամբ՝ այս տարում քոլեջ է ընդունվել 94 դիմորդ: Վերջին երեք տարում դիմորդների աճ է գրանցվել, և այժմ քոլեջում ուսանում են 216 սովորող: Որոշակի դժվարություններ կան դասավանդողների խնդրում, ասենք, տուրիզմի մասնագետի կարիք ունեն: Իսկ, արդյո՞ք քոլեջի շրջանավարտները կարողանում են նախընտրած մասնագիտությամբ աշխատել: **«Աշխատանք գտնում են, բայց ոչ բոլորը, աշխատանք գտնելու խնդիրներ ամեն տեղ կան»,** – պատասխանեց զրուցակիցս:

Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարանն այս ուստարում 60-ից ավելի նոր սովորող է ունեցել՝ «Համակարգիչների շահագործում» բաժին՝ 14 սովորող, «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա»՝ 13 սովորող, «Կարի արտադրության տեխնոլոգիա»՝ 12 սովորող, «Խոհարարական գործ»՝ 12 սովորող, «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»՝ 11 հոգի:

«Արդյո՞ք ուսումնարանի շրջանավարտները նախընտրած մասնագիտությամբ կարողանում են աշխատանք գտնել»,– հարցին ուսումնարանի կարիերիայի պատասխանատու Ալինա Պողոսյանի տեղեկացմամբ՝ մանավանդ եռակցողները և կարի վարպետները պահանջարկ ունեն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում:

Ստեղծված իրավիճակը, ինչ խոսք, տխուր է, եթե չասենք հուսահատեցնող: Պատճառները մի քանիսն են՝ արտագաղթ, ցածր ծնելիություն՝ դրանով պայմանավորված ժողովրդագրական տխուր պատկեր, կրթական ցածր մակարդակ, որ ստեղծվել է հանրակրթական դպրոցներում ուսման հանդեպ անտարբերությունից: Այս ամենը խորհրդածության առատ նյութ պիտի լինի երկրի տերերի և պատկան մարմինների համար:

Խնդիրը համահասարակական է, եթե չասենք համազգային: Նման վիճակը ուղղակի թե միջնորդավորված սպառնում է մեր ազգային անվտանգությանը...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

***Յ.Գ.** Հրապարակման մեջ պիտի ընդգրկված լիներ նաև Գորիսի գյուղատնտեսական քոլեջը, բայց նրա տնօրենի պաշտոնակատար Աննա Տոռոզյանը չպատասխանեց մեր հեռախոսազանգերին, իսկ նախկին տնօրեն Նունե Ավետիսյանը մեզ խոստացավ տվյալներ տրամադրել կրթօջախի՝ այս տարվա ընդունելության վերաբերյալ, բայց այդպես էլ մնացինք խոստմանը սպասող:*

//

Կներն անցկացվում են գյուղի վարչական շենքում (դպրոց է հաճախում 70 աշակերտ, որոնց դասավանդմամբ զբաղված է 20 ուսուցիչ): Ըստ տնօրենի՝ շինարարական աշխատանքները կավարտվեն աշնանային արձակուրդի օրերին (հոկտեմբերի վերջին շաբաթը): **«Շինարարներից գոհ ենք, գործերն արվում են մեր ուզած ձևով և որակով», –** եզրափակեց Սոնա Հովհաննիսյանը:

Աշխատանքների պատվիրատուն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն է:

Դպրոցների կառուցման ծրագրում ընդգրկված է նաև Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոցը: Ինչպես հայտնեց դպրոցի տնօրեն Անուշ Իսաջանյանը՝ տակավին ոչինչ արված չէ, բայց նման բան լինելու է, նախարարությունից են խոստացել (ուշադիր եղեք, ծրագրի ավարտ է սահմանված մինչև 2026 թվականը), որին մի քանի ամիս է մնացել: Իսկ Սիսիանի թիվ 2 դպրոցի համար պիտի կառուցվի 648 տեղանոց շենք:

Այլ ճակատագիր է բաժին ընկել Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցին, որի կառուցման շինաշխատանքները սկսվել են դեռևս 2020 թ. նոյեմբերին: Կրթօջախի տնօրեն Նորայր Եսայանի հավաստմամբ՝ անպատասխանատու շինարարի պատճառով շինարարությունը ձգձգվել է մինչև 2025 թ. ապրիլ, որից հետո շինարարությունը ստանձնել է նոր շինկազմակերպություն, որն օպերատիվորեն գործն առաջ է տանում: Դասերն անցկացվում են կրթօջախի հին շենքում, դպրոց է հաճախում 74 աշակերտ, դասավանդողների թիվը՝ 20: Նոյեմբերի վերջին նոր դպրոցը պատրաստ կլինի ընդունելու նրանց: Կառավարության որոշմամբ՝ դպրոցը 150 տեղանոց է, ևս 20 տեղ կհատկացվի մանկապարտեզին:

Ծրագրի պատվիրատու կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն է:

Քարահունջի դպրոցի վերաբերմամբ նախատեսված էր նոր դպրոցի կառուցում, բայց գյուղում համապատասխան տարածք չի գտնվել: Նորի կառուցումը փոխարինվել է դպրոցական ներկայիս շենքի հիմնանորոգումով: Այժմ դասերն անցկացվում են դպրոցի երկու մասնաշենքից մեկում, մյուսում վերանորոգում է ընթանում: Հետո կլինի հակառակը: Ինչպես տեղեկացրեց դպրոցի վարչատնտեսական համակարգող Գագիկ Հովսեփյանը, հիմնանորոգումը սկսվել է հունիսի 25-ին, նախատեսվում է մինչև նոր տարին ավարտին հասցնել: Այժմ դպրոցում սովորում է 151 աշակերտ, որոնց դասավանդում է 28 ուսուցիչ:

Գորիսի տարածաշրջանի Հարթաշենի միջնակարգ դպրոցի պարագայում ևս կառավարության որոշմամբ նախատեսվում է նոր կրթահամալիրի կառուցում՝ 144 տեղանոց, ևս 40 տեղ կհատկացվի մանկապարտեզին: Ծրագրի պատասխանատուն ՀՀ քաղաքաշինության կոմիտեն է: Հարթաշենի դպրոցի վարչատնտեսական պատասխանատու Զորիկ Վարդանյանի փոխանցմամբ՝ շինթույլտվությունը տրվել է այս տարվա հունիսին, շինարարները խոստացել են կրթահամալիրի շինարարությունն երկու տարվա ընթացքում ավարտին հասցնել:

Քիչ հավանական է, որ մինչև դեկտեմբերի վերջը 43 դպրոցի համար նախատեսված կառուցումը, վերակառուցումը, հիմնանորոգումն ավարտին կհասցվեն: Վերջերս մամուլում հաղորդագրություն եղավ, որ ՀՀ-ում 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման ծրագրում կներգրավվի աշխատուժ Իրանի Իսլամական Հանրապետությունից: Այդ մասին հռչակագիր են ստորագրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վարդանյանը և Իրանի ճանապարհների ու քաղաքաշինության նախարար Ֆարզանե Սադեղը: Այդպիսի ընդգրկուն ծրագրի իրականացման դեպքում հավելյալ աշխատուժը երբեք չի խանգարի...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
16.09.2025

ԿՈՐԵԼ Է «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտության 2023 թ. շրջանավարտ Վահան Էդգարի Կարապետյանի դիպլոմը՝ N 051447, գրանցման համար 738: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Գորիսի պետական համալսարանի 2015 թ. շրջանավարտ Արտակ Արթուրի Տատինցյանի դիպլոմը՝ AB208926, գրանցման համար՝ 4526: Համարել անվավեր:

Այն ամենը, ինչ տեսա «Հիգեա» բժշկական կենտրոնում, մի բառով կարելի է բնութագրել՝ նվիրվածություն

Նամակ խմբագրությանը

Շատ բան եմ տեսել, տարբեր հոգեկերտվածք և արժեհամակարգ ունեցող մարդկանց հետ եմ շփվել: Բայց, այնուամենայնիվ, ինձ համար նորություն էր բուժսպասարկման այն մակարդակը, որ առկա է «Հիգեա» բժշկական կենտրոնում: Այն մարդկային պահվածքը և սրտացավ վերաբերմունքը, որ ունի կենտրոնի համահիմնադիր Սերոբ Սմբատյանը, պարզապես հիացնում է: Երիտասարդ և համակրելի մի մասնագետ, ով բժշկական բարձրագույն կրթություն է ստացել, այնուհետև տարբեր կլինիկաներում վերապատրաստում անցել և այժմ իր գիտելիքներն ու փորձն ներդնում է հայրենի քաղաքի բնակիչների առողջության պահպանման համար:

Անչափ տպավորված եմ կենտրոնի երիտասարդների աշխատանքով, մասնավորապես բժիշկ-ռևմատոլոգ Նունե Մանուկյանով, ով Երևանից որոշակի օրերի ժամանում է Կապան, իր մասնագիտական գիտելիքներով օգտակար լինում մեր համաքաղաքացիներին: Այդքան զբաղված լինելով՝ ժամանակ է գտնում հետաքրքրվելու իմ առողջական վիճակով, խորհուրդներ տալիս: Երբեմն այն դեպքում, երբ Կապանում չի գտնվում:

Քանիցս լինելով «Հիգեա» բժշկական կենտրոնում՝ ավելորդ անգամ համոզվում ես, որ նման բուժհաստատությունը պահանջված է մայրաքաղաքից հեռու գտնվող մեր քաղաքում: Երկու կարծիք լինել չի կարող, որ այսուհետև սրտի հետ կապված (և ոչ միայն) խնդիրներ ունենալու դեպքում Կապանի շատ բնակիչներ չեն բռնի մայրաքաղաքի ճանապարհը, ինչը սովորաբար եղել է նախկինում: Ինձ համար նորություն էր նաև, որ «Հիգեա» բժշկական կենտրոնը հագեցած է այդքան ժամանակակից բուժսարքավորումներով, որ միայն մեծ քաղաքներում կհանդիպես:

Մի խոսքով՝ տպավորված եմ և երախտապարտ «Հիգեա» բժշկական կենտրոնի անձնակազմին՝ մարդկային վերաբերմունքի և բարձրակարգ սպասարկման համար: Այդպիսի մարդիկ միայն հարգանքի են արժանի: Երբեմն ձայներ են լսվում, թե երիտասարդներն անտարբեր են դարձել, մարդկայնությունը վերացել է: Բնավ այդ կարծիքին չեմ: Մարդկային լավագույն հարաբերությունները դեռևս պահպանվել են՝ հենց ի դեմս «Հիգեա» բժշկական կենտրոնի բուժանձնակազմի և օժանդակ աշխատակիցների: Մնում է ասել՝ խաղաղ երկնքի տակ ապրեք, Աստված բոլորիդ պահապան:

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՌՈՐԳՅԱՆ
ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ

Կապանի բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում 2025-26 ուստարվա ընդունելության արդյունքները մտահոգիչ են

Արդեն մի քանի տարի է՝ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների թիվը կրճատվում է: Կրթության ոլորտի փորձագետները, մասնագետները տագնապի կոչնակ են հնչեցնում, քանզի որոշ մասնագիտություններ, ասենք՝ քիմիան, հայտնվել են անհետանալու եզրին: Որոշ ուսումնական հաստատություններ կրթական տարին մեկնարկել են կիսադատարկ լսարաններով: Որոշ դեպքերում չեն լրացվում պետպատվերով հատկացվող թափուր տեղերը, ինչը գոնե չէր նկատվում տարիներ առաջ:

Ինչպիսի՞ն է վիճակը մարզկենտրոն Կապանում: Հարցի պատասխանն իմանալու նպատակով շրջայց կատարեցինք մարզկենտրոնի ուսումնական հաստատություններով:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղին 2025-26 ուստարվա համար հատկացվել է 52 տեղ (30 անվճար, 22 վճարովի): Ընդ որում վճարովի տեղերի զգալի մասը տրվել է լեռնահանքային արդյունաբերության մասնագիտություններին՝ ա) լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում (10 անվճար տեղ), բ) օգտակար հանածոների հարստացում (10 անվճար տեղ), գ) մետալուրգիա (9 անվճար տեղ):

Երկու անվճար տեղ էլ հատկացվել է «Տնտեսագիտություն» մասնագիտությանը:

Ինչպես տեղեկացրեց մասնաճյուղի տնօրենի պարտականությունները կատարող Նունե Իսակյանը, ընդունելության դինամիկան դեպի նվազում է տանում, դեռ ավելին՝ ցավալի պատկեր է ներկայացնում:

Մասնաճյուղ է դիմել 55 հոգի, որից 21-ն է հաղթահարել անցողիկ շեմը: Եվ այս 21-ից երկուսը հրաժարվել է առկա ուսուցման համակարգում սովորել՝ նպատակահարմար գտնելով պահպանել միասնական քննությունների արդյունքները և դիմել հեռակա ուսուցման համակարգ: Սեպտեմբերի 1-ին առաջին կուրսեցիներին կմիանան վեց-յոթ հոգի, ովքեր տարկետում են վերցրել բանակում ծառայելու համար:

Եվ մեկ տխուր հանգամանք, երկու տարի է, ինչ դիմորդները չեն հաղթահարում ընդունելության շեմը «Մետալուրգիա» մասնագիտության գծով: Դրան հավելած՝ ընդունելություն չի կազմակերպվել «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և համակարգեր» մասնագիտության գծով՝ տեղում համապատասխան մասնագետներ չլինելու պատճառով: Եվ եթե համեմատելու լինենք անցած ուստարվա հետ, 2024-25-ի համար հատկացվել էր 88 տեղ (30-ը անվճար, 58-ը՝ վճարովի), բուհ էր դիմել 61 դիմորդ, որից ընդունելության շեմը հաղթահարել էր 31-ը:

Ըստ մեր զրուցակցի՝ ցածր ցուցանիշների վիճակագրության «հետքերը» հանրակրթական դպրոց են տանում, ավելի ստույգ՝ բնագիտական առարկաների դասավանդման դրվածքով են պայմանավորված: «Օգտակար հանածոների հարստացում» և «Մետալուրգիա» մասնագիտությունների գծով միասնական քննությունների համար թիվ մեկ առարկան ֆիզիկան է: Դիմորդներից շատերը կաղում են հենց այդ առարկայից:

Ընդունելության վիճակագրությունն ինչ-որ չափով շտկելու համար հուշագիր է ստորագրվել Կապանի լեռնահարստացման կոմբինատի հետ, դիմորդների համար բուհի ընդունելության ծրագրով մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից 10-ամյա նախապատրաստական դասընթացներ կազմակերպելու նպատակով: Դրանց կմասնակցեն դիմորդներ, ովքեր ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ կդիմեն «Օգտակար հանածոների հարստացում», «Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում» և «Մետալուրգիա» մասնագիտություններով:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ամենաշատը դիմել են՝ «Տնտեսագիտություն» մասնագիտության բաժնում ընդունվելու համար. երկու անվճար, 13 վճարովի տեղի համար դիմել են 28 հոգի, որից ընդունելության շեմը հաղթահարել են 26-ը, որից 11-ը դուրս են մնացել: Հույս ունեն, որ նրանք ուսում կստանան «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ՝ հեռակա ուսուցման համակարգում:

Օրեր առաջ հանդիսավոր պայմաններում դիպլոմներ հանձնվեցին 2024-25 ուստարում մասնաճյուղն ավարտած 65 շրջանավարտի: Այդ թիվը համեմատելով այս տարի ընդունվածների թվին (21), ավելի է ակնհայտ դառնում հետընթացը:

Կապանում գտնվող երկրորդ բուհը Հայաստանի եվրոպական համալսարանի Կապանի մասնաճյուղն է, որտեղ կրթություն կարելի է ստանալ հեռակա ուսուցմամբ՝ չորս մասնագիտությունների գծով՝ «Կառավարում», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Հոգեբանություն» և «Իրավագիտություն»: Յուրաքանչյուր ուստարում այստեղ ընդունվում են 80 ուսանող: 2025-ին այս ուսումնական հաստատություն են դիմել 100-ից ավելի դիմորդ, որից ընդունվել է 80 հոգի: Ուսանելու համար մասնաճյուղում ստեղծվել են բարեհարմար պայմաններ:

Կապանի արվեստի պետական քոլեջ է դիմել 36 դիմորդ: Այստեղ կրթություն է իրականացվում 14 մասնագիտությունների գծով: Աշխուժություն կար գեղարվեստի մասնագիտությունների (դիզայն և գեղանկարչություն) գծով՝ 21 դիմորդ: Եվս վեց հոգի քոլեջ է ընդունվել «Պարարվեստ», երկուսը՝ «Դերասանական արվեստ» մասնագիտությունների գծով:

Ընդամենը յոթ դիմորդ է ընդունվել երաժշտական մասնագիտությունների գծով, մեկական՝ լարային և փողային բաժնում, երեքը՝ ժողգործիքների, երկուսը՝ երգեցողության մասնագիտություններով: Կրթօջախը, անշուշտ, կփակվեր, եթե 2006 թվականին Կապանի երաժշտական ուսումնարանը չվերապրոֆիլավորվեր Կապանի արվեստի պետական քոլեջի: Այս համատեքստում քոլեջի տնօրեն Աշոտ Խաչատրյանը նշեց, որ անելիքներ ունեն Կապանի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները:

Թափուր են մնացել «Դաշնամուր», «Երգչախմբավարություն», «Երաժշտության տեսություն», «Էստրադային արվեստ» մասնագիտությունների տեղերը: Մանավանդ մտահոգիչ է դաշնամուրի բաժին չդիմելու հանգամանքը, երբ տարիներ առաջ ածիոտաժ էր լինում հատկապես այդ բաժին ընդունվելու համար:

Որպես սփոփանք՝ տնօրենը նշեց, որ քոլեջի 22 շրջանավարտից յոթն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն:

Կապանի պետական բժշկական քոլեջն իրականացնում է կրթական ծրագիր «Քույրական գործ», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ», «Մանկաբարձական գործ», «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունների գծով՝ միջնակարգ և հիմնական կրթության հիման վրա: Այս տարի քոլեջ է դիմել 46 հոգի, ընդունվել է 40-ը՝ «Քույրական գործ» և «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունների գծով: Մյուս բաժիններում, դիմորդների ոչ բավարար քանակով պայմանավորված, ընդունելություն չի իրականացվել:

Անցած տարի ունեցել են 34 դիմորդ, ընդունվել է 33-ը: Փաստորեն նախորդ տարվա համեմատ որոշակի առաջընթաց կա:

Ինչպես փոխանցեց քոլեջի տնօրեն Արաքսյա Սարգսյանը, նոյեմբերին կկայանա «Դեղագործություն» մասնագիտության հեռակա ուսուցման ընդունելությունը:

Եղածներից առավել մխիթարական է պատկերը Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջում (տնօրեն՝ Վրեժ Բադալյան): Քոլեջ է ընդունվել 142 դիմորդ (անցյալ ուստարում՝ 157 էր): Պետության կողմից գերակա են ճանաչվել ա) բաց լեռնային աշխատանքներ, բ) շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում, գ) կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում, դ) օգտակար հանածոների հարստացում մասնագիտությունները, որոնց պահանջարկ կա աշխատաշուկայում: Բացի այդ, այս կրթօջախում դիմորդների բարձր թիվը կարելի է պայմանավորել բարձր կրթաթոշակով (50 հազար դրամ), որ հատկացվում է գերակա մասնագիտություններ ընտրած սովորողներին:

Քոլեջում ուսանողների թիվը 420 է, ասել է թե՝ գոնե այս կրթօջախն ապրում է լիարժեք կյանքով:

Դիմորդների թվի նվազումը բացատրել միայն արտագաղթով և բարձրագույն և միջին-մասնագիտական կրթության հանդեպ անտարբերությամբ, ճիշտ չի լինի: Պատճառներն ավելի հիմնավոր են և ուսումնասիրության կարոտ:

Անհաջողության արմատները, նախևառաջ, պիտի փնտրել հանրակրթական դպրոցներում, որտեղ դպրոցականների մեջ սեր ու հետաքրքրություն պիտի առաջացնել բնագիտական առարկաների հանդեպ (և ոչ միայն)...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
05.09.2025

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 03.10.2025թ.: